

**5. 1990-1997 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան

Երկրում ընթացող սոցիալ-տնտեսական կարևորագույն գործընթացների վերլուծության հիմնական տեղեկատվական բազան հանդիսանում է Ազգային հաշիվների համակարգը՝ իր հիմնական և փոխկապակցված ցուցանիշներով:

Մակրոմակարդակով տնտեսության վիճակի և զարգացման վերլուծությունն անհրաժեշտ է պետական կառավարման մարմիններին տնտեսության կարգավորման հետ կապված հարցերի որոշման, դրանց հստակեցման և տնտեսական քաղաքականության մշակման, ինչպես նաև, այդ քաղաքականության իրագործման հետ կապված տարբեր պետական ծրագրեր կազմելու համար:

90-ական թվականների սկզբներին անկախ պետությունների առանձնացումը և նախկին միության հանրապետությունների միջև տնտեսական կապերի խզումը, սպառման ավանդական շուկաների կորուստն ու մաքսային “խոչընդոտների” ստեղծումը, ազգային արժույթների ներդրումը հանգեցրին այդ պետությունների մեկուսացմանը և դրանց տնտեսություններում երկարատև ճգնաժամային երևույթների առաջացմանը:

Ինչպես ԱՊՀ այլ պետություններում, Հայաստանում, նույնպես, 1990-1993թթ. տեղի ունեցավ տնտեսական զարգացման մակարդակի զգալի անկում, արձանագրվեց արտադրության ծավալների աննախադեպ կրճատում: Դրական տեղաշարժեր գրանցվեցին միայն սկսած 1994թ.:

Չնայած վերջին տարիներին արձանագրված տնտեսական որոշակի առաջընթացին, 1997թ. վերջին Հայաստանի հանրապետությունն իր արտադրության իրական ծավալներով զիջել է 1990թ. մակարդակը ավելի քան 42 տոկոսով, իսկ վերջնական սպառման ծավալներով՝ 18.3 տոկոսով:

Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) 1990-1997թթ. տվյալների շարքի հիման վրա կատարված վերլուծական նյութում դիտարկվել են ԱՀՀ առանձին հաշիվների ծավալները, կառուցվածքն ու դինամիկան, ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ դրա առանձին հատվածների և ճյուղերի կտրվածքով: Հիմնական ցուցանիշների ծավալների և կառուցվածքի, տնտեսությունում և առանձին հատվածներում հիմնական ագրեգատների փոխադարձ կապերի և համամասնությունների վերլուծությունը ժողովածուում ներկայացված է ընթացիկ գներով, այսինքն, այն գներով, որով իրականացվել է իրական տնտեսական շրջանառությունը: Համադրելի գներով ներկայացված ցուցանիշների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս չափել տնտեսության զարգացման դինամիկան ժամանակի մեջ, չեզոքացնելով գնային գործոնների ազդեցությունը:

5.1. Ապրանքների և ծառայությունների հաշիվ

Ամբողջ տնտեսության իրավիճակի՝ թողարկման և սպառման գործընթացների ամփոփ բնութագիրը ներկայացված է “Ապրանքներ և ծառայությունների հաշիվում”։ Այդ հաշիվն արտացոլում է ապրանքների և ծառայությունների ընդհանուր ռեսուրսները և դրանց օգտագործման ուղղությունները։

1997թ. հանրապետությունում ապրանքների և ծառայությունների ռեսուրսների ծավալները 1994թ. համեմատ աճել են 3.6 անգամ և կազմել 1924 մլրդ. դրամ, որից ավելի քան 75.6 տոկոսը կազմել են ներքին ռեսուրսները՝ 1994թ. 74.6 տոկոսի և 1990թ.՝ 80.2 տոկոսի դիմաց։

Հանրապետությունում առկա ռեսուրսների օգտագործման կառուցվածքը

տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ

	1990	1994	1995	1996	1997
Ռեսուրսներ- ընդամենը	100	100	100	100	100
այդ թվում՝ օգտագործվել է՝					
միջանկյալ սպառում	37.5	40.0	36.3	36.8	33.8
վերջնական սպառում	28.3	36.7	46.1	45.2	48.0
համախառն կուտակում	20.2	8.1	7.2	8.1	8.0
ապրանքների և ծառայությունների արտահանում	14.8	13.6	9.4	9.4	8.5
վիճակագրական շեղում	-0.8	1.6	1.0	0.5	1.7

Բերված տվյալները վկայում են ընդհանուր ռեսուրսների մեջ ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների բաժնի կրճատման և վերջնական սպառմանն ուղղված միջոցների բաժնի կայուն աճի մասին։ 1997թ. օգտագործված ընդհանուր ռեսուրսներում ապրանքների և ծառայությունների արտահանման բաժնի՝ (8,5 տոկոս) 2,7 տոկոսային կետով ցածր լինելը, դրա համախառն արտադրության մեջ ունեցած բաժնից՝ 11.2 տոկոս, կարելի է բացատրել արտահանման համեմատ ներմուծման ավելի մեծ ծավալներով։ Ներմուծման տեսակարար կշիռն ընդհանուր ռեսուրսներում 1994-1997թթ. տատանվել է 22-26 տոկոսների սահմաններում 1990թ. 20 տոկոսի պայմաններում։ 1997թ. ներմուծման բաժինը սպառման (արտադրությանը զուգարած ներմուծում՝ հանած արտահանում) մեջ կազմել է 26.6տոկոս, 1994թ.՝ 29.4 տոկոսի և 1990թ.՝ 23.3 տոկոսի դիմաց։

Հանրապետության արտաքին առևտուրը վերջին տարիներին ձեռք է բերել հակվածություն ԱՊՀ երկրներից դեպի աշխարհի այլ երկրներ։ Եթե 1993թ. այլ երկրների հետ իրականացվող արտաքին առևտրի բաժինը կազմել է 28 տոկոս, ապա 1997թ.՝ 65 տոկոս։ Ընդ որում, դեպի ԱՊՀ երկրներ արտահանման ծավալի, ինչպես նաև այդ երկրներից ներմուծման ծավալի բաժինները 1997թ. 1995թ. համեմատ կրճատվել են 65-68 տոկոսով։ 1997թ. ԱՊՀ երկրների բաժինը արտահանման մեջ կազմել է 40.7 տոկոս, իսկ ներմուծման մեջ՝ 33.5 տոկոս։

5.2. Արտադրության հաշիվ

Հանրապետությունում ռեսուրսների ստեղծման գլխավոր աղբյուրն ապրանքների և ծառայությունների *համախառն թողարկումն* է: 1997թ. թողարկման ծավալը, հիմնական գներով*, կազմել է 1391.0 մլրդ.դրամ, շուկայական գներով* 1455.3 մլրդ.դրամ, որը գերազանցել է 1994թ. մակարդակը 3.6 անգամ: Ապրանքների և ծառայությունների ստեղծման գործընթացում ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսության բազային հինգ ճյուղերում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ և կապ, առևտուր) 1997թ. թողարկվել է ընդհանուր ծավալի 83.5 տոկոսը, 1994թ.՝ 89.8 տոկոսի և 1990թ.՝ 84.2 տոկոսի դիմաց: Ապրանքների և ծառայությունների թողարկման բաժնի որոշ կրճատումն այս հատվածում պայմանավորվել է արդյունաբերության և շինարարության ճյուղերի բաժնի զգալի կրճատման հետ, իսկ 1994թ. համեմատ՝ նաև գյուղատնտեսության բաժնի նվազեցման հետ: 1990թ. համեմատ արդյունաբերության բաժինը կրճատվել է ավելի քան մեկ անգամ, իսկ շինարարությանը՝ երկու անգամից ավելի:

Դրա կողքին աճել է առևտրի, տրանսպորտի և կապի ճյուղերի թողարկման բաժինը:

Համախառն թողարկման օգտագործման կառուցվածքում ևս տեղի են ունեցել էական փոփոխություններ:

1990-1997թթ. տվյալների շարքերի դիտարկումը ցույց է տալիս, որ *համախառն թողարկման կառուցվածքում* տեղի է ունեցել արտադրության միջանկյալ ծախսերի բաժնի կրճատում և, համապատասխանաբար, ավելացված արժեքի և զուտ հարկերի տեսակարար կշռի աճ: Վերջիններս պայմանավորված են, հիմնականում, թողարկման համեմատ միջանկյալ սպառման ծախսերի ավելի ցածր աճի տեմպերով:

Ապրանքների և ծառայությունների թողարկման կառուցվածքի դինամիկան

տոկոսներով ընդամենի նկատմամբ

	1990	1994	1995	1996	1997
Ապրանքների և ծառայությունների թողարկում (շուկայական գներով)	100	100	100	100	100
այդ թվում՝					
միջանկյալ սպառում	46.8	53.5	48.0	47.6	44.7
համախառն ներքին արդյունք	53.2	46.5	52.0	52.4	55.3
որից՝					
զուտ հարկեր	4.2	1.5	1.9	2.9	4.4

1990-1994թթ. *միջանկյալ սպառման* բաժնի աճն ու ՀՆԱ-ի կրճատումը պայմանավորված էր ինչպես ընդհանուր արտադրության ծավալների, այնպես էլ դրա արդյունավետության անկմամբ:

* Հիմնական գինը, ի տարբերություն շուկայականի, բազաում է ապրանքների և ծառայությունների վրա ցանկացած հարկ և ներառում է սուբսիդիան:

Արտադրության անկման տարիներ են եղել 1991, 1992, 1993 թվականները: Այդ տարիներին տնտեսությունում զբաղվածների թվաքանակի ոչ մեծ կրճատման պայմաններում (Տոկոսով), կտրուկ կրճատվեցին ՀՆԱ-ի իրական արտադրության ծավալները, իսկ արդյունքում՝ ՀՆԱ-ի արտադրությունը տնտեսությունում, մեկ զբաղվածի հաշվով, 1993թ.՝ 1990թ. համեմատ նվազեց ավելի քան կիսով չափ:

1994թ.-ից տնտեսության անկման գործընթացները կանգ առան և սկսվեցին արձանագրվել զգալի դրական փոփոխություններ՝ այն է իրական ՀՆԱ-ի աճ: Տնտեսությունում զբաղվածների թվաքանակի ավելի քան 11 տոկոսով կրճատման պայմաններում, 1997թ., 1993թ. համեմատ, աշխատանքի արտադրողականությունն աճեց 38.6 տոկոսով: Այնուամենայնիվ, 1997թ. աշխատանքի արտադրողականությունը կազմեց 1990թ. մակարդակի 68.7 տոկոսը միայն:

1994-1997թթ. տեղի է ունեցել միջանկյալ սպառման ծախսերի տեսակարար կշռի նվազում, ինչպես ողջ տնտեսությունում (8.8 տոկոսային կետով), այնպես էլ ապրանքների արտադրության ոլորտում (6.5 տոկոսային կետով): Մասնավորապես, արդյունաբերության ճյուղում այն նվազեց 7.1, գյուղատնտեսությունում՝ 6.1 և շինարարությունում՝ 4.1 տոկոսային կետով:

Ծառայություններ մատուցող ճյուղերի թողարկման ծավալում 1997թ. միջանկյալ սպառման բաժինը կրճատվել է 4.1 տոկոսային կետով: Դրանք նկատելիորեն կրճատվեցին տրանսպորտի, կոմունալ տնտեսության, կրթության, մշակույթի, առողջապահության ճյուղերում: Դրանց կողքին զգալի աճ նկատվեց բնակարանային տնտեսության և կապի ճյուղերում:

5.3. Համախառն ներքին արդյունք

Տնտեսության զարգացման ընդհանրացնող ցուցանիշը համախառն ներքին արդյունքն (ՀՆԱ) է: 1990-1994թթ. անվանական ՀՆԱ-ի աճը հիմնականում տեղի է ունեցել գների աճի հաշվին, այսինքն, իրականում ապրանքների և ծառայությունների արտադրության ֆիզիկական ծավալները կրճատվել են: 1994թ., 1990թ. համեմատ, ապրանքների և ծառայությունների սպառողական գներն աճել են ավելի քան 22 հազ.անգամ, այդ թվում, միայն ծառայություններինը մոտ 48 հազ. անգամ: 1994թ. ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմել է 4161.0 տոկոս, իսկ 1990-1994թթ.՝ նշված ցուցանիշը կազմել է 6,5 հազ.անգամ: **ՀՆԱ-ի դեֆլյատորն** իրենից ներկայացնում է փաստացի գներով ՀՆԱ-ի հարաբերակցությունը դրա՝ նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ծավալի վրա: ՀՆԱ-ի դեֆլյատորի և սպառողական գների ինդեքսի զգալի խզումը պայմանավորված է շուկայում գների ազատականացմամբ և այն հանգամանքով, որ դեֆլյատորը, բացի սպառողական գներից, ձևավորվում է նաև արտադրողների գներից, աշխատավարձի և հարկերի ինդեքսից, պետական հիմնարկների կողմից ներկայացվող ոչ շուկայական ծառայությունների գներից: Վերը նշվածը հաստատում է նշված ցուցանիշների գների և ինդեքսների ցածր լինելու փաստը: Այսպես, օրինակ, արդյունաբերական արտադրանքի արտադրողի գները 1990-1994թ.թ. աճել են 11 հազ. անգամ, միջին ամսական աշխատավարձը՝ 1,4 հազ.անգամ:

Հանրապետությունում դրամավարկային որոշակի քաղաքականության իրականացման արդյունքում 1995թ. կասեցվեցին գերինֆլյացիոն գործընթացները և տնտեսությունում հաստատվեց գների համեմատաբար կայուն վիճակ: Այսպես, 1997թ., 1994թ. համեմատ, սպառողական գներն աճել են ընդամենը 3.7 անգամ, այդ թվում վճարովի ծառայությունների ինդեքսը՝ մոտ 10 անգամ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջին երեք տարիներին, ինչպես և ողջ 1991-1997թթ., գների ամենամեծ աճ է արձանագրվել կապի, բնակարանային-կոմունալ, շինարարության և արդյունաբերության ճյուղերում: Եթե 1990-1993 թթ. ՀՆԱ-ի իրական ծավալը (հաշվի առած գնային գործոնը) հանրապետությունում նվազել է ավելի քան երկու անգամ կամ միջինը մեկ տարում՝ 22.3 տոկոսով, ապա 1994-1997թթ. ժամանակահատվածում նկատվել է ՀՆԱ-ի զգալի աճ՝ 23.3 տոկոսով կամ տարեկան 5.4 տոկոսային կեսով: Այնուհանդերձ, 1997թ. ՀՆԱ-ի իրական մակարդակը (ՀՆԱ-ն՝ համադրելի գներով) կազմել է 1990 թ. մակարդակի 58 տոկոսը միայն:

1997թ. *փաստացի գներով* արտադրվել է 804.3 մլրդ դրամի ՀՆԱ կամ 4.3 անգամ ավել՝ քան 1994 թ.: *Բնակչության մեկ շնչի հաշվով* հանրապետությունում 1997թ. արտադրվել է 212 հազ. դրամի ՀՆԱ՝ 1994թ. 50 հազ. դրամի դիմաց: ԱՄՆ դոլարով արտահայտված այն կազմել է՝ 426 և 172 դոլար:

ՀՆԱ-ի կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններն ու աճի տեմպերը.

	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ				Տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ			
	1994	1995	1996	1997	1994	1995	1996	1997
Համախառն ներքին արդյունքը (շուկայական գներով)	100	100	100	100	105.4	106.9	105.9	103.3
այդ թվում՝								
1.ապրանքների արտադրություն	79.5	71.6	65.8	60.2	105.0	102.6	103.9	98.6
որից՝								
արդյունաբերություն	29.1	24.3	23.4	22.5	109.6	102.6	101.1	101.3
գյուղատնտեսություն	43.5	40.7	34.8	29.4	103.1	104.0	102.0	95.5
շինարարություն	6.7	6.5	7.4	8.1	105.7	94.2	125.2	103.9
ապրանքների արտադրության այլ ճյուղեր	0.2	0.1	0.2	0.2	68.2	95.6	137.3	119.4
2.ծառայությունների արտադրություն	17.4	24.7	28.7	31.8	110.8	122.6	106.3	104.9
3.ապրանքների և ծառայությունների զուտ հարկեր (առանց սուբսիդիայի)	3.1	3.7	5.5	8.0	89.6	127.8	141.6	151.5

1994-1997թթ. ՀՆԱ-ի աճն առանց զուտ հարկերի կամ ճյուղերի հիմնական գներով համախառն ավելացված արժեքի աճը կազմել է 118.4 տոկոս, այսինքն, ՀՆԱ-ի 123.3 տոկոսը ընդհանուր աճի 4.9 տոկոսային կեսն ապահովվել է *զուտ հարկերի հաշվին*: 1990-1994թթ. զուտ հարկերի բաժինը ՀՆԱ-ում նվազման միտում ուներ, իսկ 1995թ. որոշակի հարկային քաղաքականության մշակման արդյունքում, նորից սկսեց աճել հարկերի բաժինը և 1997թ. կազմեց

8.0 տոկոսային կես: 1995թ. սկսած ՀՆԱ-ի աճը գերազանցել է համախառն ավելացված արժեքի աճին:

Նաև նկատելիորեն աճել է անուղղակի հարկերի բաժինը հարկային եկամուտներում: Պետբյուջեի ստացած եկամուտներում 1997թ. անուղղակի հարկերի բաժինը կազմել է 42 տոկոս կամ 2 անգամ ավելի, քան 1994թ.:

Հարկային մուտքերի ծավալի աճն անմիջական և դրական ազդեցություն է թողել ինչպես ՀՆԱ-ի աճի, այնպես էլ պետբյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) մակարդակի վրա: Այսպես, 1997թ. պետբյուջեի պակասուրդը կազմել է ավելի քան 20 մլրդ. դրամ, 1996թ.՝ 29 մլրդ. դրամի և 1995թ.՝ 31 մլրդ. դրամի դիմաց: ՀՆԱ-ի նկատմամբ պետբյուջեի պակասուրդի հարաբերակցությունը կազմել է համապատասխանաբար 2.5, 4.4 և 6.0 տոկոս:

1994-1997թթ. տնտեսության բազային ճյուղերի իրական ծավալների աճ է տեղի ունեցել արդյունաբերությունում՝ 115.2 տոկոս, շինարարությունում՝ 129.5 տոկոս, առևտրում՝ 325.4 տոկոս, տրանսպորտում և կապում՝ 134.4 տոկոս, ծառայություններ մատուցող ոլորտից՝ բնակարանային տնտեսությունում՝ 467.4 տոկոս, ֆինանսա-վարկային ճյուղում՝ 250.4 տոկոս, կառավարման և պաշտպանության ճյուղում՝ 123.8 տոկոս, գիտության և գիտական սպասարկման ոլորտում՝ 108.3 տոկոս:

ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի դինամիկան ցույց է տալիս, որ դրա կազմում (շուկայական գներով) վերջին մի քանի տարիներին արձանագրվել է ապրանքների արտադրության տեսակարար կշռի նվազման կայուն միտում, իսկ դրա կողքին՝ ծառայությունների արտադրության, մասնավորապես, շուկայականի բաժնի մեծացում: Շուկայական են համարվում այն ծառայությունները, որոնք տնտեսական նշանակություն ունեցող գներով իրացվում են շուկայում: Այս ծառայությունների ծախսերն ամբողջությամբ կամ մեծ մասամբ փոխհատուցվում են դրանց իրացման հասույթի հաշվին:

1997թ. *ապրանքների* արտադրության բաժինը ՀՆԱ-ում (հիմնական գներով), առանց հաշվի առնելու ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները, կազմել է 63.8 տոկոս: Այն 1990թ. համեմատ կրճատվել է 6.1 տոկոսային կեսով, իսկ 1994թ. համեմատ՝ 15.5 տոկոսային կեսով: *Ծառայությունների* արտադրության բաժինն աճել է համապատասխանաբար նույն չափով: 1990-1997թթ. այս աճն ամբողջությամբ ապահովվել է շուկայական ծառայությունների հաշվին, քանի որ ոչ շուկայական ծառայությունների բաժինը 1997թ. 1990թ. համեմատ կրճատվել է 3.5 տոկոսային կեսով:

Ոչ շուկայական են կոչվում անհատական և կոլեկտիվ բնույթի այն ծառայությունները, որոնք ներկայացվում են պետական կառավարման մարմինների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից՝ անվճար կամ տնտեսական նշանակություն չունեցող գներով: Այս ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերն ամբողջությամբ կամ մեծ մասամբ փոխհատուցվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Դրանք, հիմնականում պետության կողմից ներկայացվող կոլեկտիվ ծառայություններն են՝ անվտանգության և պաշտպանության, օրենքի և օրինականության ապահովման, գիտության և

գիտական ուսումնասիրությունների իրականացման, շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառներում, ինչպես նաև առողջապահության, կրթության, մշակույթի, արվեստի և այլ բնագավառներում մատուցվող անհատական ծառայությունները:

1997թ. ՀՆԱ-ի (հիմնական գներով) ճյուղային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս արդյունաբերության ճյուղի բաժնի կրճատում՝ 8.9 տոկոսային կետով՝ 1990թ. համեմատ, և 5.3 տոկոսային կետով՝ 1994թ. համեմատ: Գյուղատնտեսության բաժինը կայուն աճի միտում է ունեցել՝ 90-ական թվականների առաջին տարիներին, 1993թ. այն կազմել է 51 տոկոս, իսկ սկսած 1994թ. գրանցվել է դրա ամենամյա կրճատում: 1997թ. արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսարար կշիռները ՀՆԱ-ում կազմել են համապատասխանաբար՝ 23.8 և 31.1 տոկոս:

Շուկայական ծառայությունների ոլորտում զգալի գերակշռություն են ձեռքբերել կոմունալ տնտեսության, առևտրի և տրանսպորտի ճյուղերը: 1990թ. համեմատ նշված ճյուղերի բաժիններն աճել են համապատասխանաբար 3, 2.1 անգամ և 5 տոկոսով, իսկ 1994թ. համեմատ՝ 3.2, 2.2 և 3.4 անգամ: Եթե 1990թ. տնտեսության հինգ բազային ճյուղերում արտադրվել է համախառն ավելացված արժեքի 81.5 տոկոսը, 1994թ.՝ 90.8 տոկոսը, ապա 1997թ.՝ 83.2 տոկոսը:

Հատվածային կտրվածքով ՀՆԱ-ի արտադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1997թ. ոչ ֆինանսական հատվածում արտադրվել է համախառն ավելացված արժեքի մոտ 69.5 տոկոսը, տնային տնտեսություններում՝ 23.1 տոկոսը, պետականում՝ 7.2 տոկոսը: Այս ցուցանիշները 1994թ. կազմել են համապատասխանաբար՝ 72.7, 22.1 և 5.0 տոկոս:

ՀՆԱ-ի արտադրությունը տնային տնտեսությունում իրականացվում է այդ տնտեսության անբաժանելի մասը կազմող և անմիջապես դրա անդամին պատկանող ձեռնարկությունում՝ այսպես կոչված, կվազիկորպորացիաներում: Տնային տնտեսության հատվածի ավելացված արժեքը (ՀՆԱ-ն) ստեղծվում է ֆերմերային տնտեսությունների, անհատ ձեռնարկատերերի կամ վարձու աշխատողների ներգրավումով փոքր ձեռնարկությունների, ինքնազբաղվածների և տնային տնտեսության բոլոր այն անդամների գործունեության արդյունքում, որոնք զբաղվում են գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ և վերամշակմամբ, մանրածախ առևտրով, անհատական բնակարանների և այլ կառույցների շինարարությամբ, կահույքի, հագուստի արտադրությամբ, ինչպես նաև, տրանսպորտային, իրավաբանական, առողջապահական, կրթական և այլ ծառայությունների մատուցմամբ: Տնային տնտեսությունները նշված ապրանքներն ու ծառայություններն արտադրում են շուկայում այլ սպառողներին վաճառելու կամ փոխանակելու համար, ինչպես նաև, իրենց անձնական վերջնական սպառման ու կուտակման համար:

Արտադրական եղանակով հաշվարկված համախառն ներքին արդյունքի արտադրության եռամսյակային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ՀՆԱ-ի գերակշռող մասը սովորաբար արտադրվում է III և IV եռամսյակներում: 1993թ. եռամսյակների միջև եղած մեծ խզումները հետագա տարիներին սկսել են հարթվել: Այսպես, եթե 1993թ. II կիսամյակում արտադրվել է ՀՆԱ-ի 85.8 տոկոսը, այդ թվում IV եռամսյակում՝ 53 տոկոսը, 1995թ. համապատասխանաբար՝ 70.5 տոկոսը և 36.8 տոկոսը, ապա 1997թ.՝ 68.6 տոկոսը և 35.5 տոկոսը: Այս երևույթը պայմանավորված է

գյուղատնտեսության և շինարարության սեզոնայնությամբ, որոշակի ժամանակաշրջաններում առևտրի աշխուժացմամբ և մատուցված ծառայությունների որոշ տեսակների դիմաց վճարմամբ: Այսպես, 1997թ. I եռամսյակում գյուղատնտեսության բաժինը կազմել է 6.7 տոկոս, երրորդում՝ 41.4 և չորրորդում՝ 30.7 տոկոս: Ծինարարության ճյուղում IV եռամսյակում ստեղծվել է տարեկան ծավալի 47.7 տոկոսը, I եռամսյակի՝ 8.4 և III եռամսյակի՝ 30.7 տոկոսի դիմաց: Առևտրի ճյուղում ստեղծված ավելացված արժեքի ավելի քան 44 տոկոսը, տրանսպորտի ճյուղի 47 տոկոսը ստեղծվել են IV եռամսյակում: Սովորաբար տարվա վերջում աշխուժանում է նաև հարկահավաքման գործընթացը: 1997թ. IV եռամսյակում մուտքագրվել է ապրանքների և ծառայությունների զուտ հարկերի 40 տոկոսը, I եռամսյակի 10 տոկոսի դիմաց, 1993 թ.՝ 50.3 տոկոսը՝ 6.8 տոկոսի դիմաց:

1992թ. ՀՆԱ-ի տեսակարար կշիռը II կիսամյակում կազմել է 66.8 տոկոս, այդ թվում, միայն IV եռամսյակում՝ 32.7 տոկոս: 1993թ. այդ հարաբերակցությունը նկատելիորեն փոխվել և կազմել է համապատասխանաբար՝ 85.8 և 53.տոկոս: 1993թ. արտադրված ՀՆԱ-ի տեսակարար կշռի այդ կտրուկ աճը՝ II կիսամյակում և IV եռամսյակում, պայմանավորված էր նաև հանրապետությունում՝ 1993թ. նոյեմբերին, ազգային արժույթի ներդրման հետ: Արտադրված ՀՆԱ-ի եռամսյակային կառուցվածքի փոփոխության վրա զգալի ազդեցություն է թողել գյուղատնտեսական մթերքների գների կտրուկ աճը: Միայն 1993թ. նոյեմբեր ամսին գյուղատնտեսության գների ինդեքսը կազմել է 12353 տոկոս, հունվար-հոկտեմբերի՝ 1037 տոկոսի դիմաց: Արդյունքում, գյուղատնտեսական մթերքների գների ինդեքսը 1993թ. երեք անգամ բարձր է եղել 1993թ. հունվար-սեպտեմբեր ամիսների գների ինդեքսից:

ՀՆԱ-ի լրահաշվարկներն ու ճշգրտումները

Հանրապետությունում 1991 թվականից սկսված գյուղատնտեսության, իսկ 1995 թվականից՝ տնտեսության որոշ ճյուղերի ձեռնարկությունների սեփականաշնորհման լայնածավալ գործընթացի արդյունքում, զգալիորեն աճել է ՀՆԱ-ի արտադրության բաժինը մասնավոր հատվածում: Եթե 1990թ. մասնավոր հատվածի տեսակարար կշիռն արտադրված ՀՆԱ-ում կազմել է 11.7 տոկոս, 1995թ.՝ 51.7 տոկոս, ապա 1997թ. այն կազմել է արդեն 67.9 տոկոս: Գյուղատնտեսության և առևտրի ճյուղերում մասնավոր հատվածի բաժինը կազմել է 95-97 տոկոս, արդյունաբերությունում՝ մոտ 45 տոկոս:

Ազատական տնտեսարարին անցման ժամանակաշրջանում մեծ թվով փոքր և միջին մասնավոր ձեռնարկությունների ստեղծումն ու անհատ ձեռնարկատերերի թվաքանակի զգալի ավելացումն անհնար է դարձնում համատարած ձևով տվյալների հավաքագրումը, և շատ հաճախ, դրանց մեծ մասը դուրս են մնում վիճակագրական հաշվառումից:

Ձեռնարկությունների պետական ռեգիստրում 01.01.98թ. դրությամբ գրանցված են եղել 77,6 հազար տնտեսավարող սուբյեկտներ, որոնց ավելի քան 51տոկոսը կամ 40 հազարը կազմել են անհատ ձեռնարկատերերը, մոտ 12 տոկոսը կամ 9 հազարը՝ անհատական ձեռնարկությունները, 7.7 տոկոսը կամ մոտ 6 հազարը՝ արտադրական կոոպերատիվները և այլն:

Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունը ընդգրկում է պետռեզիստրում գրանցված տնտեսավարող սուբյեկտների որոշ մասը միայն: Այսպես, ՀՀ վիճնախարարության կողմից 1997թ. իրականացված փոքր ձեռնարկությունների ընտրանքային հետազոտության արդյունքով պարզվել է, որ պետռեզիստրի գրանցումների հիման վրա ընտրված հետազոտվող միավորներից փաստացի գործելիս են եղել դրանց միայն 34 տոկոսը, ընդ որում, այդ գործողներից 26 տոկոսը ներկայացրել են ոչ լրիվ տվյալներ: Առանց պետական գրանցման, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել են հարցման մասնակիցների ավելի քան 60 տոկոսը:

Բոլոր այն տնտեսական միավորների գործունեությունը, որոնք չեն ներկայացնում հաշվետվություն՝ ընդհանրապես կամ ներկայացնում են խեղաթյուրված և ոչ լրիվ տեսքով, ինչպես նաև, տվյալ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունք չունեցող անձանց կողմից իրականացվող գործունեությունը, ձևավորում են "չհաշվառվող" տնտեսությունը:

Հանրապետությունում "չհաշվառվող" տնտեսությունը գնահատվում և ՀՆԱ-ում հաշվի է առնվում սկսած 1994 թվականից: Այն գնահատվում է արտադրական և վերջնական սպառման եղանակներով: Սակայն այս երկու անկախ եղանակներով հաշվարկված "չհաշվառվող" տնտեսության ցուցանիշները շատ մոտ են ստացվում՝ տարբերությունը կազմում է մոտ 2 տոկոս:

Վերագնահատման և ճշգրտման հիմքում ընկած են աշխատանքի արդյունավետության, տնտեսության մեջ զբաղվածների և գործազուրկների թվաքանակի մասին տվյալներ: Թվաքանակի ցուցանիշի հետ մեկտեղ օգտագործվում են նաև անուղղակի մակրոտնտեսական մեթոդներ, այսինքն, օգտագործվում են բոլոր հնարավոր տեղեկատվական աղբյուրները, մասնագետների փորձագիտական գնահատականները, հետազոտությունների և հարցադրումների արդյունքները, տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալները:

Տնտեսության տարբեր ճյուղերում գնահատման մեթոդները տարբեր են և դրանց ընտրությունը կապված է տեղեկատվական բազայի հնարավորությունից:

Հաշվարկի համար օգտագործվում են տնտեսության մեջ զբաղվածների և պարբերական վիճակագրությամբ ընդգրկվածների թվաքանակի վերաբերյալ տվյալներ: Այս երկու աղբյուրների հիման վրա որոշվում է զբաղվածների այն թվականակը, որի համար բացակայում է անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը: Հարկ է նշել, որ վիճակագրական հաշվետվություններում չհաշվառված թվաքանակի և տնտեսության ճյուղերում աշխատանքի արտադրողականության հաշվարկի համար աշխատողների թվաքանակից հանվում է ոչ լրիվ զբաղվածության ռեժիմով աշխատողների և հարկադիր արձակուրդի մեջ գտնվողների թվաքանակը: Պայմանականորեն այս թվաքանակը կարելի է որակել որպես թաքնված գործազրկություն: Հաշվարկման ժամանակ հաշվի է առնվում նաև համատեղության կարգով զբաղվածների թվաքանակը:

1997թ. "չհաշվառվող" տնտեսության ծավալը (ներառյալ բնակչության անհատական գործունեությունը) կազմել է 233 մլրդ. դրամ կամ հանրապետությունում արտադրված ՀՆԱ-ի 28.9 տոկոսը: "Չհաշվառվող" տնտեսության բաժինը 1994թ. կազմել է 27 տոկոս, 1995թ.՝ 31.6 տոկոս և 1996թ.՝ 34.3տոկոս: 1997թ., նախորդ երկու տարիների համեմատ, "չհաշվառվող" տնտեսության

մակարդակի իջեցման վրա որոշակի ազդեցություն է թողել պաշտոնական վիճակագրության ընդգրկվածության ընդլայնումը՝ մասնավորապես, անհատ ձեռնարկատերերից տվյալների ստացումը, և հարկաբյուջետային քաղաքականության ակտիվացումը՝ հարկային դաշտի ընդգրկվածության ընդլայնումը: Չնայած, 1997թ. 1995թ համեմատ, որոշ ճյուղերում "չհաշվառվող" տնտեսության բաժնի զգալի կրճատմանը, ինչպես, օրինակ, առևտրում՝ մոտ 23 տոկոսային կետով և արդյունաբերությունում՝ 7.3 տոկոսային կետով, այն շարունակում է մեծ մնալ առևտրի, շինարարության, տրանսպորտի և կապի ճյուղերում: Նշված ցուցանիշն այս ճյուղերում 1997թ. կազմել է համապատասխանաբար՝ 65.9, 44.7 և 31.8 տոկոս: Տրանսպորտի ճյուղում վերջին տարիներին նկատվել է "ստվերային" հատվածի մասնաբաժնի զգալի ավելացում՝ ավելի քան 1.9 անգամ:

5.4. Եկամուտների ձևավորման հաշիվ

ԱՀՀ-ի կարևորագույն հաշիվներից է եկամուտների ձևավորման հաշիվը, որը հնարավորություն է տալիս բնորոշելու ՀՆԱ-ն սկզբնական եկամուտների ստացման տեսանկյունից՝ այսինքն, ըստ եկամուտների աղբյուրների:

ՀՆԱ-ն՝ ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների

	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ				
	1990	1994	1995	1996	1997
ՀՆԱ (շուկայական գներով)	100	100	100	100	100
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	57.4	41.5	39.3	40.0	41.8
Արտադրության և ներմուծման գուտ հարկեր	10.9	4.6	5.0	6.4	8.9
Համախառն շահույթ (համախառն խառը եկամուտ)	31.7	53.9	55.7	53.6	49.3
Հիմնական կապիտալի սպառում	14.9	14.8	14.3	15.0	14.4
Ջուտ շահույթ (գուտ խառը եկամուտ)	16.8	39.1	41.4	38.6	34.9

ՀՆԱ-ի կառուցվածքը սկզբնական եկամուտների ձևավորման տեսանկյունից դիտարկելիս անհրաժեշտ է նշել, որ 1997թ. ՀՆԱ-ի 41.8%-ը կազմել է վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը, 8.9 տոկոսը՝ արտադրության և ներմուծման գուտ հարկերը և 49.3 տոկոսը՝ ձեռնարկությունների ու կազմակերպությունների, տնային տնտեսությունների համախառն շահույթը (համախառն խառը եկամուտը): 1990-1997թթ. տվյալների շարքը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում տնտեսության մակարդակով ավելի քան մեկ ու կես անգամ աճել է համախառն շահույթի բաժինը, նկատելի նվազման միտում է ձեռքբերել վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության բաժինը: 1990թ. այս երկու ցուցանիշների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար՝ 31.7 և 57.4 տոկոսային կետ:

Այս փոփոխությունների արդյունքում հանրապետության տնտեսության վարձու աշխատողների աշխատանքի շահագործման աստիճանը, որը չափվում է համախառն շահույթի և արտադրության ու ներմուծման գուտ հարկերի գումարի հարաբերակցությամբ՝ աշխատանքի վարձատրության նկատմամբ, 1990-1997թթ. աճել է մոտ 1.9 անգամ և կազմել 139 տոկոս: Հատկապես

աճել է շահագործման աստիճանը ֆինանսական հատվածում՝ 1990թ. 103.3 տոկոսից այն 1997թ. հասել է 440.5 տոկոս, ոչ ֆինանսական հատվածում այն աճել է մոտ 60 տոկոսով, պետականում, ընդհակառակը՝ նվազել է ավելի քան 30 տոկոսով: Հիմնական ճյուղերի դիտարկումը ցույց է տալիս, որ այս ցուցանիշի զգալի աճ է արձանագրվել արդյունաբերությունում՝ 2.6 անգամ, քնակկոմունալ տնտեսությունում՝ 3.1 անգամ, ֆինանսավարկային և ապահովագրության ճյուղում՝ 5.9 անգամ, առողջապահությունում՝ 4.6 անգամ, կրթությունում՝ 4.1 անգամ:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ աշխատանքի վարձատրության բաժնի նվազումը որոշ չափով կապված է դեպի մասնավոր ձեռնարկատիրության հատված՝ քնակչության լայն զանգվածի տեղափոխման գործընթացի հետ: Դրա արդյունքում տեղի է ունենում եկամուտների վերաբաշխում՝ մեծամասնություն կազմող վարձու աշխատողներից՝ դեպի ձեռնարկատերերի փոքր խումբ: Բացի այդ, շատ ձեռնարկատերեր, իրենց վարձու աշխատողներին վճարում են կանխիկ աշխատավարձ՝ չգրանցելով այդ գումարներն իրենց հաշվետվություններում կամ վարձու աշխատողներ են պահում՝ բանավոր համաձայնությամբ:


1997թ. *աշխատանքի վարձատրության* ձևով հանրապետությունում վճարվել է 336.1 մլրդ. դրամ կամ 4.3 անգամ ավելի, քան 1994թ.: 1997թ. աշխատավարձի վարձատրության ողջ ծավալի 81.4 տոկոսը կամ 273.5 մլրդ. դրամը, ստացել են ոչ ֆինանսական հատվածում զբաղվածները, 14.5 տոկոսը կամ 48.6 մլրդ դրամը՝ պետական հատվածում և 2.8 տոկոսը կամ 9.5 մլրդ դրամը՝ տնային տնտեսություններում զբաղվածները:

Ըստ ՀՀ վիճնախարարության կողմից իրականացվող տնային տնտեսությունների հետազոտության տվյալների, 1995թ. մեկ տնային տնտեսությունն իր համախառն եկամտի 31.8 տոկոսը ստացել է աշխատավարձի ձևով, 10.2 տոկոսը՝ պետական նպաստների և կենսաթոշակների և 58.0 տոկոսը՝ այլ եկամուտների ձևով:

1996թ. մեկ տնային տնտեսության ամսական համախառն եկամուտը կազմել է 38836 դրամ կամ մեկ շնչի հաշվով՝ 11964 դրամ: Ամբողջական եկամտի բաշխվածությունն՝ ըստ եկամտի աղբյուրների, հետևյալն է.

- եկամուտ՝ զբաղվածությունից (աշխատավարձ, աշխատավարձ՝ բնամթերքի ձևով և նմանատիպ այլ վարձատրություններ) -13.1 տոկոս,
- ինքնզբաղվածությունից - 13.3 տոկոս,
- գյուղատնտեսական ապրանքների արտադրությունից և իրացումից - 30.2 տոկոս,
- սեփականությունից (վարձավճար, տոկոսավճար, դիվիդենտ) - 2.8 տոկոս,
- պետական նպաստներ և կենսաթոշակներ - 6.1 տոկոս,
- տրանսֆերտների ձևով (օգնություն՝ բարեկամներից և բարեգործական օգնություն) - 34.5 տոկոս:

1998թ. մեկ տնային տնտեսության եկամտի (ամբողջական) կառուցվածքը՝



Ճյուղային կտրվածքով ավելացված արժեքի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության տնտեսությունում ողջ աշխատավարձի 76-82 տոկոսը 1990-1997 թթ. ստացել են տնտեսության հինգ բազային ճյուղերի աշխատողները, որտեղ ստեղծվել է տնտեսության ողջ համախառն շահույթի 87-95 տոկոսը:

Ավելացված արժեքի կազմում աշխատավարձի և շահույթի բաժնի դինամիկան՝ ըստ հիմնական ճյուղերի

տոկոսներով՝ ավելացված արժեքի նկատմամբ

	1990թ		1994թ		1997թ	
	Աշխատանքի վարձատրություն	Համախառն շահույթ	Աշխատանքի վարձատրություն	Համախառն շահույթ	Աշխատանքի վարձատրություն	Համախառն շահույթ
Արդյունաբերություն	67.9	25.8	44.2	55.3	44.8	53.8
Գյուղատնտեսություն	31.3	66.5	29.1	70.0	32.2	66.8
Շինարարություն	72.6	24.8	70.1	29.7	69.7	29.4
Առևտուր	59.9	38.3	52.1	47.8	49.6	49.9
Կապ	31.7	66.0	23.0	76.9	24.1	74.7
Տրնսպորտ	42.8	53.9	51.6	48.1	43.3	56.0
Բնակարանային տնտ.	52.6	45.3	60.2	39.7	4.8	94.7
Կոմունալ տնտ.	52.6	45.3	46.1	53.8	46.9	52.5
Վարկավորում	58.6	40.4	27.1	44.7	19.3	80.0
Ընդամենը	62.4	34.1	42.8	55.6	45.4	53.6

1997թ. աշխատանքի վարձատրության 9.6 տոկոսը կազմել են *սոցիալական ապահովագրական վճարները*, 1994թ.՝ 6.5 տոկոսի և 1990թ.՝ 7.5 տոկոսի դիմաց: Գործատուների և վարձու աշխատողների կողմից վճարված սոցիալական ապահովագրական գումարները 1997թ., 1994թ.-ի համեմատ, աճել են 6.4 անգամ: Աշխատավարձն այդ ժամանակահատվածում աճել է 4.2 անգամ:

Գների ազատականացման արդյունքում, մինչև 1995թ., ինչպես մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձի, այնպես էլ բնակչության դրամական եկամուտների աճի տեմպերը զգալի չափով զիջել են սպառողական ապրանքների և ծառայությունների գների ու սակագների ինդեքսին, ինչն առաջ էր բերել այդ տարիներին բնակչության գնողունակության զգալի անկում՝ մոտ 15 անգամ՝ 1990թ. համեմատ: Միայն սկսած 1995թ., գների կայունացման արդյունքում, նկատվեց բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտների և գնողունակության կայուն աճ: 1995-1997թթ. մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձի 7.5 անգամ աճի և բնակչության դրամական եկամուտների 5.5 անգամ աճի պայմաններում սպառողական գներն աճեցին 3.7 անգամ: Դրական այս փոփոխությունների արդյունքում բնակչության *իրական տնօրինվող դրամական եկամուտներն* աճեցին 1.5 անգամ:

Համախառն շահույթի ծավալը 1997թ.-ին 1994թ.-ի համեմատ ավելացել է 3.9 անգամ (փաստացի գներով) և կազմել 396.8 մլրդ. դրամ, որից 59.2 տոկոսը ստեղծվել է ոչ ֆինանսական հատվածում և 40.6 տոկոսը՝ տնային տնտեսություններում: Տնային տնտեսություններում համախառն շահույթը ներառում է աշխատանքի վարձատրության տարր, որը դժվար է առանձնացնել ստացված շահույթից: Այդ իսկ պատճառով համախառն շահույթը տնային տնտեսությունների հատվածի համար կոչվում է *համախառն խառը եկամուտ*:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ՀՆԱ կազմում մոտ երկու տոկոսային կետով նվազել է *արտադրության և ներմուծման գուտ հարկերի* տեսակարար կշիռը: 1994 թվականից արձանագրվել է դրա բաժնի կայուն աճ: Արտադրության և ներմուծման հարկերն իրենց մեջ ընդգրկում են ինչպես ապրանքների և ծառայությունների հարկերը՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, մաքսատուրք, այնպես էլ արտադրության կազմակերպման գործընթացի հետ կապված այլ հարկերը՝ հողի հարկ, գույքահարկ, ավտոճանապարհներից օգտվելու համար և տրանսպորտային միջոցների տերերից գանձվող վճարներ, արտոնագրային վճար, բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման վճարներ և այլն:

Արտադրության և ներմուծման հարկերում ապրանքների և ծառայությունների հարկերի բաժինը 1997թ. կազմել է 90.4տոկոս, իսկ արտադրության այլ հարկերինը՝ 9.6 տոկոս: Վերջինս 1994-1997թ.թ. ունեցել է նվազման միտում: 1997թ. վճարած արտադրության այլ հարկերի 38.1տոկոսը բաժին է ընկել արդյունաբերության ճյուղին, 32.5 տոկոսը՝ գյուղատնտեսությանը, 7.6 տոկոսը՝ շինարարությանը և 5.8 տոկոսը՝ առևտրին: Այս ցուցանիշի հատվածային կտրվածքը ցույց է տալիս, որ արտադրության այլ հարկերի 86.1 տոկոսը վճարել է ոչ ֆինանսական հատվածը, և միայն 10 տոկոսը՝ տնային տնտեսությունները:

14-15 տոկոսի սահմաններում է կազմել *հիմնական կապիտալի սպառումը*: Հիմնական կապիտալի սպառումն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում ֆիզիկական և նորմայի սահմաններում բարոյական մաշվածքի ու պատահական վնասվածքների արդյունքում՝ հիմնական կապիտալի՝ արտադրական և ոչ արտադրական հիմնական միջոցների ընթացիկ արժեքի նվազումը: 1997թ. հիմնական կապիտալի սպառման ողջ ծավալի (116 մլրդ.դրամ) ավելի քան 22 տոկոսը բաժին է ընկել արդյունաբերությանը (1994-1997թթ.՝ 23.8), 30 տոկոսը՝

գյուղատնտեսությանը (36.0), 16 տոկոսը՝ բնակարանային տնտեսությանը (13.6) և 11 տոկոսը՝ տրանսպորտի ճյուղին (8.6):

1997թ. առանձին ճյուղերի ավելացված արժեքի ծավալում կապիտալի սպառման մասնաբաժնի դիտարկումը ցույց է տալիս, որ այն բարձր է բնակարանային տնտեսությունում՝ 79.8 տոկոս, տրանսպորտում՝ 29.1 տոկոս և ճանապարհային տնտեսությունում՝ 27.4 տոկոս:

5.5. Եկամուտների բաշխման հաշիվ

Եկամուտների բաշխման հաշիվը, որն ընդգրկում է ինչպես սկզբնական եկամուտների բաշխումն, այնպես էլ եկամուտների երկրորդային բաշխումը, տեղեկատվություն է տրամադրում երկրում վարվող ֆիսկալ քաղաքականության մասին, ինչպես նաև նկարագրում է սեփականությունից ստացած եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների ազդեցությունը տնտեսության վրա: Այն բնութագրում է տնտեսության հատվածների եկամուտների այն տեսակները, որոնք ստացվում են ոչ թե արտադրական գործունեության, այլ գործառնությունների վերաբաշխման արդյունքում:


Այս հաշվում է ձևավորվում տնտեսությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից մեկը՝ ***համախառն տնօրինվող եկամուտը***:

Եթե ճյուղերի և տնային տնտեսությունների արտադրական գործունեության ընթացքում ձևավորված եկամուտներին՝ համախառն ավելացված արժեքին, ավելացնենք նաև սեփականությունից ստացած զուտ եկամուտները և ստացած զուտ ընթացիկ տրանսֆերտները, ապա կստացվի տվյալ ճյուղի համախառն տնօրինվող եկամուտը: Այլ խոսքով, տնտեսության մասկարդակով, համախառն տնօրինվող եկամուտն իրենից ներկայացնում է համախառն ներքին արդյունքի, ստացած զուտ տրանսֆերտների և սեփականությունից զուտ եկամտի հանրագումարը:

1997թ. համախառն տնօրինվող եկամուտը տնտեսության մակարդակով կազմել է 880.5 մլրդ.դրամ և գերազանցել է 1994թ. մակարդակը մոտ 4 անգամ: ՀՆԱ բաժինը համախառն տնօրինվող եկամտի կազմում 1994թ. համեմատ աճել է՝ պայմանավորված “արտերկրից” ստացված զուտ տրանսֆերտների աճի նկատմամբ ՀՆԱ առաջընթացիկ աճով: 1997թ. ՀՆԱ բաժինը կազմել է 91.3 տոկոս կամ 6.6 տոկոսային կետով ավել՝ քան 1994թ.:


Համախառն տնօրինվող եկամուտը տնային տնտեսություններում մեկ բնակչի հաշվով 1997թ. կազմել է 150 հազ.դրամ, իսկ տնօրինվող ճշգրտված եկամուտը՝ որը ներառում է նաև բնեղեն ձևով ստացած սոցիալական տրանսֆերտները, 159 հազ.դրամ: Նշված ցուցանիշները մոտ 4.1 անգամով գերազանցել են 1994թ. մակարդակը: Մեկ բնակչին ամսական տնօրինել է միջին հաշվով 13 հազ. դրամի: Չնայած այն բանին, որ 1994-1997թթ. բնակչության ստացած սոցիալական տրանսֆերտների փաստացի ծավալն ավելացել է մոտ 3.3 անգամ, վերջիններիս բաժինը նվազման միտում է ունեցել: Այսպես, տնային տնտեսությունների տնօրինվող համախառն ճշգրտված եկամտի կազմում դրանց բաժինը 1997թ. կազմել է 5.4 տոկոս, 1994թ.՝ 6.8 տոկոս և 1990թ.՝ 11.9 տոկոս: 1994-1997թթ. տնային տնտեսություններն անհատական սպառման ապրանքների և ծառայությունների ձևով առողջապահության, կրթության, մշակույթի և այլ բնագավառներում ստացել են 90.5 մլրդ. դրամի սոցիալական տրանսֆերտներ, որից ավելի քան 95.4 տոկոս՝ պետական հատվածից:

**Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքն՝
ըստ այն ձևավորող աղբյուրների**



1997թ. տնային տնտեսություններն իրենց համախառն տնօրինվող եկամտի 59.1 տոկոսը ստացել են աշխատավարձի ձևով, 28.3 տոկոսը՝ համախառն խառը եկամտի (համախառն շահույթի), 7.7 տոկոսը՝ նպաստների և կենսաթոշակների և 4.9 տոկոսը՝ “արտերկրից” ստացած օգնության ձևով:

Ոչ ֆինանսական հատվածի տնօրինվող եկամուտը



Բերված գրաֆիկական պատկերից երևում է, որ ոչ ֆինանսական հատվածում, ըստ էության, եկամտի միակ աղբյուրը 1994-1997թթ. հանդիսացել է համախառն շահույթը, որի հաշվին փոխհատուցվել են ձեռնարկությունների կողմից ստացված վարկերի դիմաց վճարած տոկոսները, շահութահարկը և եկամտից այլ հարկերը, ձեռնարկության հաշվին վճարած նպաստները, միանվագ օգնությունը, տույժերը, տուգանքները և այլն: Արդյունքում, 1997թ. համախառն շահույթն իր մակարդակով գերազանցել է համախառն տնօրինվող եկամտի մակարդակը մոտ 12 տոկոսով:

1994-1997թթ. զգալիորեն կրճատվել են ձեռնարկությունների կողմից բանկային վարկերի դիմաց վճարվող տոկոսների, շահութահարկի և եկամտից այլ հարկերի բաժինը:

Ինչպես արդեն նշվեց, տնօրինվող համախառն եկամուտը ձևավորվում է համախառն ներքին արդյունքից և զուտ ընթացիկ տրանսֆերտներից ու սեփականությունից ստացած զուտ եկամուտներից:

Տրանսֆերտը գործառնություն է, որի ընթացքում մեկ կառուցվածքային միավորը մեկ այլ կառուցվածքային միավորին է տրամադրում ապրանք, ծառայություն կամ այլ ակտիվ (ֆինանսական կամ ոչ ֆինանսական), չստանալով դրանից որևիցե փոխհատուցում կամ օգուտ: Տրանսֆերտները լինում են ընթացիկ և կապիտալ:

Ընթացիկ տրանսֆերտներից են շահութահարկը, ֆիզիկական անձանցից՝ եկամտահարկը, հողի հարկը, սոցիալական ապահովագրական վճարները, նպաստները և կենսաթոշակները, կրթաթոշակները, “արտերկրից” մարդասիրական և մասնավոր օգնությունները, կամավոր անդամավճարները, տուգանքները և այլն:

Տնտեսության մակարդակով ստացած զուտ ընթացիկ տրանսֆերտների բաժինը համախառն տնօրինվող եկամտի կազմում 1997թ. կազմել է 8.5 տոկոս, 1994թ.՝ 15.4 տոկոս:

1994-1997թթ. ստացվել և փոխանցվել է 656.8 մլրդ. դրամի ընթացիկ տրանսֆերտներ: Փոխանցված տրանսֆերտների կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ 1994-1997 թթ. ամբողջ ընթացիկ տրանսֆերտների 18 տոկոսը փոխանցել են ոչ ֆինանսական, 20 տոկոսը՝ պետական հատվածները, 20 տոկոսը՝ տնային տնտեսությունները և 40 տոկոսը՝ “արտերկիրը”:

Ստացած տրանսֆերտների ամբողջ ծավալի 51 տոկոսը բաժին է ընկել տնային տնտեսություններին (նպաստների և կենսաթոշակների, կրթաթոշակի, “արտերկրից” ստացած մարդասիրական և մասնավոր օգնության ձևով), 42 տոկոսը՝ պետական հատվածին (շահութահարկի, եկամտահարկի, սոցիալական ապահովագրական վճարների և այլնի ձևով), մոտ 4 տոկոսը՝ “արտերկրին” (միջազգային կազմակերպություններին անդամակցության անդամավճարներ, համատեղ միջազգային ծրագրերի ֆինանսավորում):

Փոխանցված և ստացված ընթացիկ տրանսֆերտների հարաբերակցության գործակիցը 1994-1997թթ. ոչ ֆինանսական հատվածում կազմել է 8.6, ֆինանսական հատվածում՝ 5.6, “արտերկիր” հատվածում՝ 10.5 և տնային տնտեսություններում՝ 0.4: Սա նշանակում է, որ տրանսֆերտների հիմնական դոնորներն “արտերկիրն” ու ոչ ֆինանսական հատվածներն են:

